

2016թ.-ին ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ
Էլեկտրոնային մամուլում

խտրականության, ատելության խոսքի
և բռնության կոչերի վերաբերյալ

2 Ե Կ ՈՒ Յ Ց



**2016թ.-ին ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ
Էլեկտրոնային մամուլում
խտրականության, ատելության խոսքի
և բռնության կոչերի վերաբերյալ**

Չ Ե Կ ՈՒ Յ Ց

Սույն հետազոտությունը իրականացվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից:

Երևան, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ ՈՒ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐԸ	5
ՎԻՐԱՎՈՐՈՒՄ Է ՊԱՇՏՈՆՅԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԸ. ԼՐԱԳՐՈՂԸ...	9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	11
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻՆ	12

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ԼԳԲՏ անձ- Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձ;

Խտրականություն – տարբերակման, բացառման, սահմանափակման կամ նախապատվության դրսևորում է, որը հանգեցնում է որոշակի հատկանիշով օժտված անձի համար նվազ բարենպաստ իրավիճակի ստեղծմանը:

Ատելության խոսք- ատելության խոսքը պետք է դիտարկել այնպիսի խոսքը, որը տարածում , հրահրում, խթանում կամ արդարացնում է ռասայական խտրականությունը, քսենոֆոբիան, անտիսեմիթիսմը, հոմոֆոբիան կամ ատելության այլ դրսևորումները, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա հետևյալ հիմքերի և դրսևորումների առնչությամբ՝ ազգայնամոլություն, էթնիկ ծագում, խտրականություն, թշնամություն փոքրամասնությունների նկատմամբ, կրոնական անհանդուրժողականություն, միգրանտներ և այլն: Ատելության խոսքը վերաբերում է անձին կամ անձանց խմբերին:

Բռնության կոչեր- բռնության կոչերը, պետք է հասկանալ այն կոչերը, որոնք ուղղված են ֆիզիկական ուժի կիրառմանը կամ իշխանության դիտավորյալ սպառնալու կոչերը որևէ անձի, անձանց խմբի կամ հանրության նկատմամբ, որը բերում է կամ մեծ հավանականությամբ կարող է բերել մարմնական վնասվածքների, մահվան, հոգեբանական վնասի, թերզարգացման կամ զրկման:

Հոմոֆոբիա- հոմոսեքսուալության արտահայտման և դրա հետ կապված հասարակական երևույթների նկատմամբ բացասական վերաբերմունք, վախ՝ հիմնված նախապաշարմունքների, և կարծրատիպերի վրա:

Ներածություն

Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) 2016թ-ի հոկտեմբերի 4-ին հրապարակել է Հայաստանի մասին զեկույց: Զեկույցը ներկայացնում է իրադրությունը 2010թ դեկտեմբերից մինչև 2016 թվականի մարտի 17-ը: Հեղինակները փաստում են, որ Հայաստանը վճռականություն է դրսևորել ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարում. իշխանությունները ձեռնամուխ են եղել համապարփակ խտրականության դեմ օրենսդրության մշակման գործին: Ինտեգրման ոլորտում Հայաստանը միջոցներ է ձեռնարկել Սիրիայից մարդկանց մեծ ներհոսքի ինտեգրման ուղղությամբ: Օրինակ՝ իշխանությունները բացել են ինտեգրման կենտրոն: Արձանագրելով հանդերձ որոշակի առաջընթաց մեր երկրում՝ զեկույցի հեղինակները նկատել են ատելություն սերմանող խոսքի աճ, որը հանգեցնում է բռնության գործողությունների: Դրա հիմնական թիրախներն են ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս) համայնքի և ոչ ավանդական կրոնական խմբերի անդամները:

Զեկույցում ամրագրված է. «Դատարանները չունեն միջազգային չափանիշների կիրառման փորձառություն, որոնց վրա հայցվորները հնարավորություն կունենան ապավինել առկա իրավական թերությունները շտկելու համար: Ռասսայական խտրականության դեպքերում ապացուցման բեռի բաշխման համար նախատեսված որևէ մեխանիզմի բացակայությունը դժվարացնում է ապացույցների հաստատումը¹»:

Բացի այդ 2015թ. դեկտեմբերի 11-ին Հայաստանի և Եվրամիության միջև ստորագրվեց «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» բյուջետային ֆինանսավորման համաձայնագիրը, որը պարտավորեցնում է Ազգային ժողովին 2016թ. վերջին ընդունել «Խտրականության դեմ» և «Ընտանեկան բռնության կանխարգելման դեմ» օրենքները:

Հանձնաժողովը գրանցել է ատելություն սերմանող խոսքի աճ ՀՀ-ում, որը հանգեցնում է բռնության գործողությունների:

Այդ մասին է վկայում նաև մեր ուսումնասիրությունների արդյունքը: Ուսումնասիրվել են էլեկտրոնային մամուլում տեղ գտած ԼԳԲՏԻ անձանց և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներին առնչվող հրապարակումները:

¹ Եվրոպայի Խորհուրդ, Մամլո հաղորդագրություն, 04.10.2016, <http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/Library/PressReleases/ARM-PR-V-2016-224-ARM.asp>.

Էլեկտրոնային մամուլում տեղ գտած խտրականությունը, աստելության խոսքն ու բռնության կոչերը

2016 թվականին Էլեկտրոնային մամուլում տեղ գտած թվով թվով 30 հրապարակումներից 8-ը միջազգային կազմակերպությունների հրատարակած զեկույցներն են, որոնք նեյտրալ տեղեկատվություն են պարունակում:

12-ը անաչառ տեղեկատվություն է՝ առանց լրագրողի տեսակետի մեջբերման, որոշ իրադարձությունների վերաբերյալ կապված ԼԳԲՏԻ համայնքի հետ՝ օրինակ Կիեվում կայացած հավասարության երթի մասին կամ այլ:

Մեր կողմից առանձնացվել են 10 հրապարակումներ, որտեղ տեղ են գտել ակնհայտ բռնության կոչեր, աստելության խոսքեր, անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ: Այդ հրապարակումները կազմում են ընդհանուր ուսումնասիրված նյութերի 1/3-ը:

Խտրականություն, վիրավորանք, աստելության և բռնության կոչեր պարունակող տեքստերից շատերը հենց վերնագրում են պարունակում վիրավորական արտահայտություններ և խտրական վերավերմունք արտահայտող բառեր:

Օրինակ՝ [«SOS. կիսադարկվի այլասերությունները Հայաստանում պոպուլյարացնելու գրանտ»](#)²:

Էլեկտրոնային մամուլի մի շարք հրապարակումներում, որոնք անաչառ տեղեկատվություն է հրապարակվել և տեքստի բովանդակությունը նպատակ չի ունեցել վիրավորելու որևէ խմբի ներկայացուցչի, բազմիցս հանդիպում ենք այնպիսի եզրույթների, ինչպիսիք են «համասեռամուլ», «արվամուլ»:

Տեքստերում հաճախ հանդիպում են ԼԳԲՏԻ համայնքի կամ նրանց իրավունքները ջատագովող անձանց ուղղված վիրավորական հետևյալ արտահայտությունները.

- Այլասերումներ
- Այլասերվածության քարոզ
- Համատարած իգացման ֆոն,
- Պեղերաստ
- Գոմիկ
- Չարիք սերմանող

Աստելության և բռնության կոչերից հաճախ են հանդիպում հետևյալ արտահայտությունները.

- Վառել, այրել
- Բանտերում փտեցնել
- Ոչնչացնել

² Shame.am, 22.09.2016

Էլեկտրոնային մամուլում տեղ գտած վիրավորական արտահայտությունների, ատելության և բռնության կոչերի, խտրական մոտեցումների օրինակներ:

➤ [Մեռական փոքրամասնությունները հարձակվում են. Հայաստանը ինչպե՞ս պետք է դիմագրավի այս գրանտակերների արշավին](#)

«Հիշեցնենք: Վերջերս ռուսական Life.ru-ն հայտնել էր, որ միջազգային ազդեցիկ ILGA կազմակերպությունը, որն զբաղված է հոմոսեքսուալների, բիսեքսուալների և այլ **այլասեռումների** քարոզով, խոշոր գրանտներով մրցույթ է սկսել գենդերային ինքնության և **այլասեռությունների** քարոզման նպատակով»:³

➤ [Լեսբիների պրոպագանդա հայ աղջիկների մասնակցությամբ Երևանի կենտրոնում.](#)

Մայիսի 17-ին Երևանի Հյուսիսային պողոտայում տեղի ունեցավ Հասմիկ Թանգյանի և Տաթև Հովհաննիսյանի «Ես քո վրա, դու իմ վրա» պարային ներկայացումը, որը նվիրված էր հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվան: Ներկայացման հղացքն էր՝ «Մերն անպաշտան է փողոցում, սերը խոցելի է տանը, երբ չկա սեր»:

«Գեյ պրոպագանդայից անցանք լեսբի պրոպագանդայի և առջևում տրանսների բենեֆիսն է: Արևմտյան գրանտներ արդեն սկսել են տալ միայն փողոցներում գալարվելու և նմանատիպ սեր ցուցադրելու համար: Եկել է ժամանակը, որ պետական մակարդակով արգելվի **այլասեռվածության քարոզը** և վերջ դրվի Հայաստանում նմանատիպ փորձարկումների իրականացմանը»:⁴

Ակնհայտ է, որ ամբողջ հրապարակումը խտրական և հեզնական ենթատեքստով է գրված և ինչպես նաև ակնհայտ վիրավորական խոսքերի գործածմամբ: Նաև անուղղակի մեղադրաքններ են հնչել այն հասարակական կազմակերպությունների ուղղությամբ, որոնք զբաղվում են ԼԳԲՏԻ համայնքի իրավունքների պաշտպանությամբ:

➤ [Եվս մեկ աղմկահարույց նամակ այս անգամ հոգևոր Գևորգյան Ճեմարանի տեսուչի մասին.](#)

Հրապարակումը քննադատում է հոգևորական՝ Տեր Տաճատին, նույնասեռականներին պաշտպանելու համար, նաև բացահայտում է որոշ հոգևորականների խտրական վերաբերմունքը նույնասեռական անձանց նկատմամբ:

³ Տեղեկատվական հարթակ, 03.11.2016թ

⁴ Am.version.am 27.06.2016

«Տեր Տաճատը մեկ անգամ չէ, որ ակնհայտ կերպով պաշտպանել է միասեռականներին՝ արդարացնելով նրանց վարքագիծը: Այսքանից հետո մեզ մնում է սպասել, որ մոտ ապագայում գուցե դեռ էլի անուններ կհրապարակվեն Երուսաղեմի և Մայր Աթոռի բարձրաստիճան և ցածրաստիճան միաբանների **խայտառակ անցյալից**, ինչը լուրջ հարված է առաջին հերթին 2000-ամյա պատմություն ունեցող եկեղեցու համար: Ակամայից գալիս ես այն եզրակացությանը, որ ճշմարիտ են կարգալույծ արված Հայր Հովհաննես արեղայի պնդումները, թե Հայ եկեղեցում **«համատարած իգացման ֆոնին** ծիծաղելի է խոսել հոգևոր կյանքի մասին, այլ պետք է խոսել հոգևոր ինքնասպանության մասին»⁵:

➤ **Երկնագույն հանրային ճակատագրական պարտությունը**

«Բոնցքամարտի համաշխարհային կազմակերպության (WBO) վարկածով աշխարհի չամպիոնի տիտղոսի համար մրցամարտում (թեթև քաշայիններ) Կրուսը պարտություն է կրել բրիտանացի Ֆլանսգանից: Մարտը տեղի է ունեցել նոյեմբերի 27-ի գիշերը, Քարդիֆում (Ուելս): Մրցավարը մենամարտը դադարեցրել է ութերորդ ռաունդում, Կրուսի երկրորդ նոկդաունից հետո: Այսպիսով, Կրուսը չկարողացավ դառնալ պատմության մեջ առաջին գեյ-չեմպիոնը, իսկ բրիտանացին պահպանեց իր չեմպիոնական տիտղոսը:

Իսկ մեկ ամիս առաջ **պեղերաստ բոնցքամարտիկն** ասում էր. «35 տարեկանում ես ինձ հիանալի եմ զգում: Ես գիտեմ, որ իմ մրցակիցը դուրս է գալու կովելու, բայց ես պատրաստ եմ հաղթել և դառնալ բոնցքամարտի պատմության մեջ առաջին գեյ-չեմպիոնը»⁶:

Հրապարակման մեջ առկա է անձի պատիվն ու արժանապատվությունը վիրավորող արտահայտություն, ընդհանուր նյութը գրված է ատելության ենթատեքստով ամբողջ գեյ համայնքի նկատմամբ՝ ի դեմս 27-ամյա բոնցքամարտիկ Կրուսի:

➤ **ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը միջազգային կառույցների պարտադրանքի ներքո**

«Ըստ **այլասերվածների իրավունքների պաշտպան Լարա Ահարոնյանի** կողմից ղեկավարած կազմակերպության ֆեյսբուքյան էջի, 2016 թ. -ի հոկտեմբերի 20-ին Երևանի Մարիոտ հյուրանոցում տեղի է ունեցել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի» (Ստամբուլյան կոնվենցիա) քննարկում, որին մասնակցել է նաև ՄԻՊ Արման Թաթոյանը: Եվրամիությունը պարտադրում է Հայաստանին վավերացնել ստամբուլյան կոնվենցիան, որի հիմնական հասկացություններից մեկն է «գուզնկերները», որոնք կարող են լինել նաև նույն սեռի ներկայացուցիչներ, այսպիսով իրավական հիմքեր ստեղծելով հասարակական կյանքի բոլոր ոլորտներում այլսերվածների իրավունքների պաշտպանության համար»:

⁵ Asekose., 29.08.2016

⁶ Shame.am, 28.11.2016

Կայքի մեկ այլ հրատարակման մեջ, ներկայացված է մի նկար, որը վերնագրված է այսպես. «Հայաստանում այլասերման քարոզ իրականացնող կազմակերպությունների ղեկավարները ԱՄՆ դեսպանի հետ հանդիպման ժամանակ»⁷:

Նախ նշենք, որ այս էլեկտրոնային կայքի առաքելությունը հենց ԼԳԲՏԻ անձանց և նրանց աջակիցներին հեղինակազրկելն ու նսեմացնելն է:

Վերոնշյալ հրատարակման մեջ նույնպես ուղղակի վիրավորական խոսքեր են հնչում ԼԳԲՏԻ համայնքի հասցեին և նրանց պաշտպանի հասցեին:

➤ **Մոմավատություն գումիկների համա՞ր .ՄՊՈ-ի հետ**

«Մարդիկ կան, որ այդ հիվանդությունից չունեն, բայց իրենց կարիերայի համար գեյ էլ, լիզբիանկա էլ են դառնում՝ փող տուր ինչ կուզես կդառնան: Դրանք ենքան **սրբապիղծ** են, որ իրենց երեխային էլ կծախեն, ծնողին էլ կտրորեն, մենակ, թե իրենց ուզածին հասնեն, բայց այդ **չարիքը** արդեն երկրիս վրա գլուխ է բարձրացնում: Սաղ կյանքդ նորմալ ապրած հիմա գնում ես գումիկ դառնա՞ս: Մեր նման փոքրը ազգը, պետք է հեռու մնա նման **չարիքից ու հիվանդությունից**»⁸:

Ամբողջ տեսանյութը նկարահանված էր, որպեսզի նվաստացներ և վարկաբերեր ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչներին: Այն ամբողջությամբ ձայնագրված էր հեզնական տոնով: Ձայնագրության մեջ հնչում են հայհոյանքներ նույնասեռականների հասցեին, վիրավորական խոսքեր՝ սրբապիղծ, այդ երևույթը անվանում են՝ չարիք և հիվանդություն:

«Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ի միջամտության արդյունքում այս տեսանյութը հեռացվել է YouTube-ից, սակայն այն պահպանվել է այլ օնլայն հարթակներում:

⁷ Նյութի աղբյուրը՝ stopG7.com, 23.10.2016

⁸ SLIM.am - Argamblog.com, 22.09.2016

Ուսումնասիրելով էլեկտրոնային մամուլում տեղ գտած հրապարակումները ԼԳԲՏԻ համայնքի վերաբերյալ, ակնհայտ է դառնում, որ համայնքի ներկայացուցիչներին թիրախավորում և նվաստացնելու փորձեր են անում ոչ միայն լրագրողները, այլև իրավաբաններն ու պաշտոնյաները:

➤ **ՀԿ-ների մասին օրինագծի քննարկումը վերածվեց հումֆորիայի մրցույթի**

Հայաստանի Հանրապետական Կուսակցության պատգամավոր Լևոն Մարտիրոսյանը ՀՀ Ազգային Ժողովում ՀԿ-ների մասին օրինագծի քննարկման ժամանակ հայտարարել է. «Ես դեմ եմ գեյ-պարադներին առհասարակ, Հայաստանում՝ մասնավորապես: Մի անեկդոտ հիշեցի. որոշվում ա գեյ պառադ անցկացնել, բայց ժամանակի խնայողության պատճառով որոշվում ա այն անցկացնել տրավմատոլոգիայի բաժանմունքի մոտ, որ այդ ծեծված գեյերին արագ հասցնեն բժիշկների մոտ»: Անեկդոտից հետո դահլիճում սկսեցին ծիծաղել⁹:

Այստեղ արդեն պետական պաշտոնյայի կողմից ակնհայտ հեզնական արտահայտություններ են արվել: Հասարակությանը կոչ է արվում, թե ինչպես պետք է պահել ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ՝ ծեծել և այլն:

Հաջորդ դեպքը, իրավիճակը, որը ոչ պակաս բացասական է՝ իրավաբանի վերաբերմունքն է.

➤ **Եթե անգամ լիցենզիայից էլ զրկեն, այդ էժանագին քայլերով չեն կարող իմ մարդ տեսակը փոխել. Գարիկ Գալիկյան**

«Փետրվարի 19-ին «A-TV» հեռուստաընկերության եթերով հեռարձակված «Կիսաաբաց լուսամուտներ» հաղորդաշարի հյուրը «Գալիկյան» փաստաբանական ընկերության տնօրեն՝ փաստաբան Գարիկ Գալիկյանն էր՝ ասել էր. «Ես պայքարել եմ իրանց դեմ, պայքարում եմ ու պայքարելու եմ: Երբ տեսնեմ, տրորելու եմ, ոտնատակ եմ տալու ու պետք է վառել, այո: Դուք գիտեք իրա նմանների պատճառով բերդերում էսօր ինչքան մարդ ա փթում, այո, միշտ տրորել եմ, տրորելու եմ ու գնալու եմ տենց էլ առաջ: կարող եք իմ վրա քրեական գործ հարուցել, ինչ ուզում եք, արեք»: Փաստաբան Գալիկյանի կողմից հնչեցված արտահայտությունները վերաբերվում էին հաղորդման հյուր, նույնասեռական Էդգար Կարապետյանին և ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչներին»¹⁰:

⁹ Epress.am, 10.06.2016

¹⁰ Hraparak.am, 27.09.2016

Այս դեպքի վերաբերյալ անհրաժեշտ է առանձնացնել երկու նկատառում՝

1. Այն փաստը, որ նմանօրինակ խտրական վերաբերմունք դրսևորվում է, իրավապաշտպան գործունեություն ծավալող անձի կողմից, վեր է հանում լրացուցիչ դժվարություններ ԼԳՏԲ համայնքի ներկայացուցիչների համար, ովքեր կփորձեն դիմել իրավապաշտպանի կամ փաստաբանի՝ չունենալով երաշխիք իրենց նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի մասով:

2. Լրատվամիջոցը, որի միջոցով հանրայնացվել է նման տեսակետը, խրախուսել է խտրական վերաբերմունքի դրսևորումը, այն դեպքում, երբ ուներ համապատասխան տեխնիկական միջոցներ (մոնտաժի և այլ), չցուցադրելու այդ հատվածը:

Այնուամենայնիվ նշված փաստի առթիվ «Նոր Մերունդ» Մարդասիրական ՀԿ-ի միջամտությամբ հարուցվել է կարգապահական վարույթ ՀՀ Փաստաբանների Պալատի կողմից և փաստաբան Գալիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ հայտարարվել է «Նկատողություն»:

Եզրակացություն

Ուսումնասիրելով էլեկտրոնային մամուլում 2016 թվականին տեղ գտած ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ ատելություն սերմանող խոսքերը, արձանագրում ենք, որ դրանք անձնավորված չեն, ինչը գործող օրենսդրության շրջանակներում հնարավորություն չի տալիս դատական կարգով պահանջել վնասի փոխհատուցում: Այս անպատժելիության մթնոլորտը նպաստում է, որ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու հաշվին որոշ լրատվական միջոցներ իրենց վարկանիշ և դիտումներ են ապահովում: Ուսումնասիրված հրապարակումները կարելի է բնորոշել որպես հոգեբանական բռնություն: Հասարակության մեջ խտրական վերաբերմունքի սրման նպաստավոր պայմաններ է ստեղծվում ՋԼՄ-ների կողմից: Այս անդեմ խտրականությունը իրականում գործում է համայնքի յուրաքանչյուր ներկայացուցչի դեմ և հանգեցնում է անհատների նկատմամբ հասարակության տարբեր ներկայացուցիչների կողմից ֆիզիկական բռնության և խոշտանգումների:

Սակայն անհրաժեշտ է նշել նաև, որ պետության և պետական մարմինների, մասնավորապես դատական համակարգում արձանագրվել է դրական տեղաշարժ:

Վերաքննիչ քրեական դատարանն, խստացրել է զինձառայողներին սեքսուալ բնույթի գործողությունների հարկադրելու, զինվորների միջև տեղի ունեցած միջադեպը թաքցնելու, զինձառայողին վիրավորանք հասցնելու համար 5 տարվա ազատազրկման դատապարտված կապիտան Բաբկեն Ղարոյանի պատժաչափը եւ դատապարտել է 8 տարվա [ազատազրկման](#)¹¹:

Այս հանգամանքը տեսանելի է դարձնում իրական դատական պաշտպանության հնարավորությունը, մասնավորապես ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների համար՝ **«Խտրականության դեմ»** օրենքի ընդունումից հետո, որպես լրացուցիչ և կարևոր իրավական գործիքի:

Իրական պատժամիջոցների մեխանիզմի առկայությունը, անխուսափելիորեն կրերի խտրական վերաբերմունքի հողի վրա իրականացվող իրավունքի խախտումների դեպքերի նվազմանը:

ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեն հրապարակել է իր [եզրակացությունները 11 երկրներում](#)¹², այդ թվում Հայաստանում, կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Ջեկույցում անդրադարձ է կատարվել նաև ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների կարգավիճակին և նշվել, որ ըստ ԼԳԳՏԻ-կազմակերպությունների, 2015-16թթ. Հայաստանում սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչների դեմ ատելության հողի վրա կատարվել է 45 հանցագործություն, չնայած, դրանց թիվը հնարավոր է շատ ավելի մեծ է:

¹¹ Ankakh.com, 09.12.2016

¹² Aravot.am, 11.25.2016

Խորհուրդներ շահագրգիռ կողմերին.

Կառավարությանը և Ազգային Ժողովին.

1. Գործողություններ իրականացնել Խտրականությունների դեմ օրենքի շուտափույթ ընդունման ուղղությամբ:
2. Փոփոխություններ կատարել քրեական, քաղաքացիական եւ վարչական իրավունքի դրույթներ պարունակող օրենսդրական ակտերում՝ խտրականության ենթարկվելու հիմքով դատարան դիմելու դեպքում վերապահում սահմանել ապացուցելիության բեռի բաշխման մասով՝ ապացուցելիության բեռը դնել պատասխանողի վրա:

Իրավապաշտպաններին, հասարակական կազմակերպություններին և հետաքրքրված խմբերին.

1. Հատուկ աշխատանքներ տանել լրագրողների հետ ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ վերջիններիս հանդուրժողականությունը բարձրացնելու նպատակով:
2. Կազմակերպել տեղեկատվական սեմինար՝ ՁԼՄ ներկայացուցիչների մասնակցությամբ, տրամադրել տերմինային ուղեցույց և համապատասխան տեղեկատվություն՝ ԼԳԲՏԻ համայնքին և համանման թեմաների լուսաբանումը ավելի գրագետ ներկայացնելու մասով:
3. Հանրայնացնել խտրական դրսևորման հետևանքով պատժված անձանց պատմությունները, որպես օրինակ:

Միջազգային կազմակերպություններին և դոնորներին.

1. Շարունակել ծրագրերի իրականացումը՝ հզորացնելով քաղաքացիական հասարակության կառույցներին Հայաստանում խտրականության, ատելության և բռնության դեմ պայքարի գործում:
2. Հայաստանի կառավարությանը տրամադրվող դրամաշնորհային փաստաթղթերում և պայմանագրերում ներառել խտրականության, ատելության և բռնության կոչերը արգելող հոդված:



«ՆՈՐ ՍԵՐՈՆԳ»
Մարդասիրական Հասարակական
Կազմակերպություն

«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental
Organization

E-mail: newgenerationngo@gmail.com <http://ngngo.net/>